## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզի
Արգել համայնք 11-րդ փողոց 3-րդ շենք
Հեռ. 093-168-468, argel.gjuxapetaran@yandex.ru

# ՈՐՈՇՈՒՄ

**«06» ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 48**
**ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 16-րդ , 17-րդ հոդվածների պահանջներով.

**համայնքի ավագանին որոշում է**

Հաստատել Արգել համայնքի ավագանու 2020 թվականի նոյեմբերի 11-ի արտահերթ թիվ 11 նիստի օրակարգը

1. Արգել համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 20-ի թիվ 67 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին
2. Արգել համայնքի տարածքում գտնվող, սակայն որպես «անհայտ» քաղաքացու սեփականություն հաշվառված 0,19728 հա մակերեսով հողամասը համայնքի սեփականություն ճանաչելու մասին

Կողմ -5 Դեմ-0 Ձեռնպահ-0

ՎԱԼԵՆՏԻՆ ԱՎԱԳՅԱՆ
ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԱՇՈՏԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԼԱԴԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱԹԵՎՈՍ ԱՎԱԳՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզի
Արգել համայնք 11-րդ փողոց 3-րդ շենք
Հեռ. 093-168-468, argel.gjuxapetaran@yandex.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«06» ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 49

ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 20-Ի ԹԻՎ 67 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 34 հոդվածի պահանջի , հիմք ընդունելով ՀՀ Կոտայքի մարզպետարանի 2020 թվականի նոյեմբերի 2- թիվ 01/08.1/08098-2020 գրությունը և հիմք ընդունելով << Տեղական ինքնակառավարման մասին >> օրենքի 30-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով

համայնքի ավագանին որոշում է

Արգել համայնքի ավագանու 2019 թվականի դեկտեմբերի 20-ի << Արգելի համայնքապետարանի աշխատակազմի, ՀՈԱԿ-ի և բյուջետային հիմարկի աշխատակիցների թվաքանակի , հաստիքացուցակի եվ պաշտոնային դրույքաչափերի հաստատման մասին>> N 67 որոշման հավելված 1-ը, շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելված 1-ի :

Կողմ -5 Դեմ-0 Ձեռնպահ-0

ՎԱԼԵՆՏԻՆ ԱՎԱԳՅԱՆ
ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԱՇՈՏԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ
ԼԱԴԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ
ՍԱՄՎԵԼ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱԹԵՎՈՍ ԱՎԱԳՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզի
Արգել համայնք 11-րդ փողոց 3-րդ շենք
Հեռ. 093-168-468, argel.gjuxapetaran@yandex.ru

# ՈՐՈՇՈՒՄ

## «06» ՆՈՅԵՄԲԵՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ N 50

## ԱՐԳԵԼ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՍԱԿԱՅՆ ՈՐՊԵՍ «ԱՆՀԱՅՏ» ՔԱՂԱՔԱՑՈՒ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՇՎԱՌՎԱԾ 0,19728 ՀԱ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահի 2010 թվականի հունիսի 01-ի թիվ 186-Ն հրամանի 9-րդ կետի 5-րդ ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2020 թվականի հոկտեմբերի 28-ի N Կ-28102020-07-0060 որոշումը

**համայնքի ավագանին որոշում է**

1. Արգել համայնքի տարածքում գտնվող, սակայն անճշտությամբ «անհայտ» քաղաքացու սեփականություն հաշվառված 0,19728 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության այլ հողամասը, հողակադաստրային ծածկագիր 07-014-0134-0011, ճանաչել որպես Արգել համայնքի սեփականություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Կողմ -5 Դեմ-0 Ձեռնպահ-0

_______ՎԱԼԵՆՏԻՆ ԱՎԱԳՅԱՆ
_______ԱՐՄԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ
_______ԱՇՈՏԻՆԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ
_______ԼԱԴԻԿ ԵՓՐԵՄՅԱՆ
_______ՍԱՄՎԵԼ ՄԵԼՔՈՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՄԱԹԵՎՈՍ ԱՎԱԳՅԱՆ

Հավելված 1
Համայնքի ավագանու 2020 թվականի
Նոյեմբերի 6 -ի թիվ 49 որոշման

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱՐԳԵԼԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների քանակը՝ 17

| Հ/Հ | Կազմակերպության անվանումը | Հաստիքի անվանումը | Հաստիքի տեսակը | Պաշտոնի ծածկագիրը | Հաստիքային միավորը | Պաշտոնային դրույքաչափը | Հավելումը | Հավելավճարը | Աշխատավարձի չափը |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Արգել համայնքապետարանի աշխատակազմ | Համայնքի ղեկավար | Քաղաքական | | 1 | 340000 | | | 340000 |
| 2 | | Համայնքի ղեկավարի տեղակալ | Քաղաքական | | 1 | 210000 | | | 210000 |
| 3 | | Համայնքի ղեկավարի օգնական | Հայեցողական | | 1 | 210000 | | | 210000 |
| | | Համայնքի ղեկավարի խորհրդական | Հայեցողական | | 1 | 195000 | | | 195000 |
| 4 | | Աշխատակազմի քարտուղար | Համայնքային ծառայություն | 1.2-1 | 1 | 205000 | | 20500 | 225500 |
| 5 | | Առաջատար մասնագետ հաշվապահ | Համայնքային ծառայություն | 3.1-1 | 1 | 180000 | | | 180000 |
| 6 | | Առաջին կարգի մասնագետ | Համայնքային ծառայություն | 3.2-1 | 1 | 120000 | | 12000 | 132000 |
| 7 | | Առաջին կարգի մասնագետ | Համայնքային ծառայություն | 3.2-2 | 1 | 120000 | | | 120000 |
| 8 | | Առաջին կարգի մասնագետ | Համայնքային ծառայություն | 3.2-3 | 1 | 120000 | | 12000 | 132000 |
| 9 | | Երկրորդ կարգի մասնագետ | Համայնքային ծառայություն | 3.2-3 | 1 | 92611 | | 9261 | 101872 |
| 10 | | Պարուսույց | Քաղաքացիական | | 1 | 92611 | | | 92611 |
| 11 | | Պահակ | Տեխնիկական | | 1 | 92611 | | | 92611 |
| 12 | | Գեղմավար | Քաղաքացիական | | 1 | 92611 | | | 92611 |
| 13 | | Վարորդ | Տեխնիկական | | 1 | 100000 | | | 100000 |
| 14 | | Հավաքարար | Տեխնիկական | | 1 | 92611 | | | 92611 |
| 15 | | Համակարգչային ծրագրերի և տեխնիկայի սպասարկող | Տեխնիկական | | 1 | 92611 | | | 92611 |
| 16 | | Անասնաբույժ | Քաղաքացիական | | 0.5 | 92611 | | | 46306 |
| | Ընդամենը | | | | 16,5 | 2448277 | | 53761 | 2455733 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՄԱԹԵՎՈՍ ԱՎԱԳՅԱՆ